

# ԱՌԱՍՊԵԼ, ԱՐՎԵՍՏ ԵՎ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## 4 Հանդիպում Մարկ Նիշանյանի հետ

**31.01.2008**

Եղուարդ Սալիտի հումանիստական եւ հակահումանիստական ֆննադատութիւնը

**17:00**

**4. 02. 2008**

Շելլինգէն մինչեւ Ֆրանց Կաֆկա եւ Դանիէլ Վարուժան:

**7. 02. 2008**

Լորտ Պալլըն եւ ազգային բանասիրութիւնը:

**11.02.2008**

Ընդմիջուած առասպելը:

“Առասպել”ի եւ “արուեստ”ի միջեւ կապակցութիւնը ստեղծուած է գրեթէ ի չգոյժ Գերման վիպապաշտներուն կողմէ, 18րդ դարու վերջին տարիներուն: Միեւնոյն տարիներուն՝ առասպել ըսուածը իր արդիական տարողութեամբ երեւան կու գար հոյ մը բանասէրներու միացեալ նիգերուն շնորհիւ եւ սահմանուած էր մեծ ապագայի մը: Առասպելի գիւտին աւետիսը հասած է Հայոց ականջին նախ արեւելեան կողմն աշխարհի, Հերդըրի ընթերցումին ընդմէջէն, եւ անոր առաջին արձագանգը կը տեսնենք Մկրտիչ Էմինի մօտ, 1850 ին: Յետոյ անցած է արեւմտահայերուն, Ալիշանին, Վարուժանին: Նոյն այդ “աւետիս”ը, Նիցշէի միջոցաւ, հասած է մինչեւ Նացիները, որոնք զարհուրելի կերպով ի գործ դրած են զայն: Այս ամբողջին մասին զեկուցելով, եւրոպական մտածողութեան ամբողջ խաւ մը կ’ուզեմ ֆննութեան առարկայ դարձնել: Գերմանացի փիլիսոփայ Շելլինգէն մինչեւ հայ բանաստեղծ Վարուժան՝ առասպել եւ արուեստ կը փոխարինեն իրենց արժէքները: Ինչո՞ւ: Այդ “ինչո՞ւ”ն է, որ կ’ուզեմ հնչեցնել անգամ մը եւս: Այդ երեւոյթին ետին՝ կայ բանասիրութիւնը: Առասպելը բանասիրութեան գիւտն է եւ ուրեմն փոխադարձաբար՝ արդի բանասիրութիւնը իր ծնունդը կը պարտի այդ գիւտին: Այս է ընդհանուր ծիրը ներկայ դասախօսութիւններուն: Այս ամբողջը հասկնալու համար սակայն, պէտք է սկսիլ ուրիշ տեղէ: Պէտք է կարդալ Եղուարդ Սալիտի Որիքնտփիսեր եւ համոզուիլ որ այդ գիրքը ըլլալէ առաջ Արեւմուտքի գաղութատիրական ձգտումներուն դէմ ուղղուած պարսաւագիր մը, է՛ եւրոպական բանասիրութեան սերնդաբանութեան (կամ ծագումաբանութեան) փորձ մը: Այդ ընթերցումէն մեկնելով է, որ կ’ուզեմ վերադառնալ վերը բացատրուած հարցերուն:

Մարկ Նիշանյանը, 1994-2007թթ դասախոսել է հայ գրականություն, Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի հայագիտական ֆակուլտետում: Այժմ դասախոսում է Բեյրութի Հայկազյան համալսարանում: ԿԱՍ վերլուծական հանդեսի հիմնադիրն է. Հեղինակ է, Պատմական այլասերում, Léo Scheer, Փարիզ, 2006թ, Արվեստի և Վկայության միջև. 20-րդ դարի հայ գրականություն: Ազգային հեղափոխություն, 1-ին հատոր, 2006թ, Բանասիրության սուգը, 2-րդ հատոր, 2007թ. MetisPresses, Ժնև, գրքերի: